



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 13 » նոյեմբերի 2019 թվականի N: 293 ք.Գյումրի

ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի N:42/44.2/40530-2019 գրությունը.

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2019 թվականի նոյեմբերի 14-ից 15-ը ներառյալ ուղարկել Երևանի պետական համալսարան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից հաստատված «Խնդրի լուծում» ծրագրով վերապատրաստման դասընթացներին:
2. Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2019 թվականի նոյեմբերի 14-ից 15-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան:

3. Ալբերտ Մարգարյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Տիգրան Հարությունյանին:
4. Ալբերտ Մարգարյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճշտ է

